ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ԿԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՑԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աժեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 14րդ չրջանի (98օգոստ.—99 մայիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ։ Հարկաւ է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1899 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարալեաք է ղրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

ԱՄ ՏԱՐԻ ԹԻՒ 64

1899 ՄԱՐՏ 22

1899 ՄԱՐՏ 10 (Հ. Տ.)

ԶՈՐԵԳՐՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի Շաբ. օրերը

ԳՆԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, հոժարակամութեամբ կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Չարտաբար չէ վերադարձնուիլ չհրատարակուած ձեռագիրները։

Յառնուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յառնուցման 1 միլիմետրը 1 սանթիմիարժէ։ 1 տպագիրը 2 սանթիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction : Rue Glandevès, 17.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոքրիկ գործեր.—Գիւղացիին հետ. — Նամակ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն (Գոսբըք). — Հայեր ի Թիւրքիա. — Թիւրքիահեն լուրեր.—Ուուս կառավարութիւնը եւ Ֆինլանտացիները. — Զինեցնելու համաժողովը. — Արտասահմանի լուրեր.— Յառնուցումներ. — Բանասիրական (Հայկական բառեր ռոմբնական լեզուին մէջ)։

ՓՈՔՐԻԿ ԳՈՐԾԵՐ(1)

Ոմանք կը հարցնեն թէ մենք ի՞նչ պէտք է անենք հայրենիքի ազատութեան սուրբ գործին նպաստելու համար։

Այդ հարցում անողներէ մէկ մասը եթէ պարզմտութեամբ և անգիտօրէն կանէ, մէկ մեծ մաս մ՚ալ անոր համար կը հարցնէ որովհետև իրենք պիրենք այնչափ մեծ մարդիկ կերեւակայեն որ նախապատրաստական գործերը կատարելը անարժան կը համարին իրենց մեծութեան. այդպիսի սկզբնական փոքրիկ գործերը գործ չեն իրենց համար. պէտք է արդէն կազմուած հայկական զօրագունդեր ունենալ որ իրենք ալ գործ անելու համար անոնց գլուխն անցնին և կամ պէտք է մեծ ծագումար դրամ ունենալ արդէն պատրաստ որ իրենց բաշխես և ապահով լինին թէ արգասաւոր գործ կայ, ոյժ կայ և իրենք ալ իրենց մարիֆէթ.

(1) Անոնց որոնք տակաւին մեզ կը հարցնեն թէ «մենք ի՞նչ պէտք է անենք հիմա», կը կրկնենք այս պատասխանը որ 6 տարի առաջ (Տեսնել Արմենիա 8րդ տարի. Թիւ 7) տուած ենք արդէն և հիմա ալ դարձեալ ստիպուած ենք նոյնութեամբ կրկնել իրենց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՌՈՄԲՆԱԿԱՆ ԼԵԶՈՒԻՆ ՄԷՋ

Երկարատև և դժուարացեալ հիւանդութիւնս չի ներելով ինձ այժմ ութեան ազգային ընդհանուր խնդիրներով զբաղիլ—և ճշմարիտն խօսելով՝ ղուրկ ալ ենք կարևոր լուր մը տալէ—, մտածեցի գոնէ դանդաղ և փութկոտութիւն չը պահանջող նիւթով մը զբաղիլ կարողութեանս ներած չափովն, որ եթէ ընդհանուրին ախորժակին չի յարմարի ալ, գոնէ պատմութիւն որոնողներու և լեզուագիտութեան հետաքրքրներու համար կրնայ օգտակար նիւթ մը ներկայացնել։

Ներ, իրենց գործելիք հրաշքները ցոյց տան։ Կան ոմանք ալ որ նախապատրաստական աշխատանքները իբրև փոքրիկ գործեր կարհամարհեն և գուցէ մի գործ ալ չեն համարիր, այլ այն ժամանակ կը հաւատան թէ գործ կայ և իրենք ալ կոգևորուին երբ իրենց ասողները լինին թէ մայիս 18ին ընդհանուր յեղափոխութիւն պիտի հանենք Հայաստանի մէջ և թէ ամեն կողմէ պէտք է կամաւորներ փութացուննել այնտեղ. կամ թէ պէտք է ասել այդպիսիներին որ այս ինչ չենք տրնամիթով օդը պիտի հանենք, դուն ալ մեզ գործակից եղիր, բայց ի հարկէ ոչ թէ պատրոյգին կրակ տալու, այլ մեր գաղտնիքի մէջ գտնուած լինելու համար։ Այդ ժամանակ գործ կը համարին այդպիսի խօսքերն. հոգ չէ թէ ծրագիրդ ոչ միայն անիրագործելի այլև ծիծաղելի իսկ լինի և կամ այնպիսի հանգամանքների մէջ կազմուած որ նոյն իսկ անոր գործադրելը փոխանակ օգուտ տալու միայն բերէ նպատակին։ Այդ Հայերի հասկացողութիւնը դեռ այնչափ նեղ է որ անկարող են ըմբռնելու թէ ժողովուրդը պատրաստել պէտք է, թէ ժողովրդին մէջ հաստատուն արմատ բռնած մի գաղափարի ոյժը տրնամիթէն շատ աւելի քանդելու կարող և արդիւնաւոր մի ոյժ կը լինի. այդպիսիների կարծիքով՝ ժողովուրդն արդէն պատրաստուած է ամեն կերպով օրովհետև իրենք չգիտնալ կը ձևացնեն կամ իրօք չեն գիտեր թէ պատրաստութիւնները ասելով ի՞նչ պէտք է հասկնալ։ Երբ որ նախնական պատրաստութիւնների մասին խօսիս, այդ փոքրիկ գործեր ոչինչ

Ահա՛ խնդիրը.

Հայր Ալպերեանի «Առաջեռն բառարան»ը կը ցուցնէ թէ մեր լեզուին մէջ կան հազարաւոր բառեր յունարէնէ, լատիներէնէ և միջնադարեան ազգաց լեզուներէ առնուած։ Այս գէպքը տարօրինակ բան մը չէ, վասնզի Հայերը այս ազգերուն հետ շփման և դիւանական յարաբերութեանց մէջ գտնուելով, կըրցան շատ բան անոնցմէ ալ փոխառնուլ —ինչպէս այսօր ալ կը տեսնենք իտալ, գոլիճ, գոմիքէ և այլն բառեր լրագիրներու մէջ գործածուած որոնք ժամանակաւ կը հարթանան—. սակայն ուշադրութեան կարևոր կէտն այն է որ հայերէնի մէջ կը գտնուին բառեր որոնցմէ ոմանք ռոմբներէն լեզուին մէջ ալ միևնոյն արտասանութիւնն և նշանակութիւնն ունին. ոմանք ալ միայն արտասանութեամբ կը մօտենան մէկզմէկու, առանց նոյն նշանակութիւնն ունենալու։ Խօսքս չէ այն բառերուն համար որոնց արմատը լատիներէնի կամ յունարէնի մէջ կը գտնուի և որոնք հասարակ են նաև հայերէնի մէջ. հապա անոնց համար որ տագիական կամ սլաւեան լեզուներէ մնացած են ռոմբնականի մէջ.

Թէ Հայերը Ռոմբններէն առած լինին այս բառերը, ենթադրելն անգամ անկարելի է. իսկ թէ Ռոմբնները Հայերէն առած լինին, հոս ալ հաւանականութիւն մը չի տեսնուիր, վասնզի այս ազգերը երբէք այնպիսի յարաբերութեանց մէջ չեն գտնուած որ մինչև ցրականութեան մէջ ալ մտցունելու բաներ փոխառած լինին մէկզմէկէ. ուստի այս բառերուն նմանութեան պատճառը աւելի հեռուն պէտք է փնտռել. պէտք է երթալ մինչև անոնց ծագումը գտնել. գործ մը որ լեզուագէտներու կը վերաբերի։ Իսկ ես գտած բառերս հոս կը նշանակեմ ըստ կարգի այբուբենի, միայն կարճառօտ բացատրութիւններ տալով հոն ուր որ պէտք է։

Ահա՛ այն բառերը.

Ակռի, արտասանութիւնը նման ռոմբնական agurida (ակուրիտա) անունին. յունարէնէ առնուած. որ ազմի կը նշանակէ։ Եթէ մեր Ակռի գիւղին աւանդական անունը յիշենք թէ նոյ ատաղնէն իջնալէն ետքը իր այգին հոն անկե-

և ըստ այմ գիտութեամբ ու փորձառութեամբ պատրաստելու, կեցած տեղդ յանկարծ կը կատարուի հրաշքով։ Հրաշքն անգամ որ մի գերբնական զօրութեան կընծայուի, Ս. Գիրքին մէջ կը տեսնենք որ մի նախնական գործիք, մի նախապատրաստութիւն կը պահանջէ գործադրուելու համար։ Մովսէս Քորեբի ապառաժէն ջուր բխեցունելու համար ձեռքը մի գաւազան կը որով զարկաւ. Յիսուս Գալիլիացիների կանայի հարսնիքին մէջ հրաշքով գինի չինելու համար՝ պահանջեց որ վեց թոկոյկները ջրով լեցուած պատրաստեն նախ և բերեն իրեն։ Գերբնական զօրութեամբ եղած լինելը մեզ պատմուած հրաշքներն անգամ նախապատրաստուած նիւթեր պահանջեր են. մինչ հրաշքէ աւելի գերբնական դիւրին միջոցով կարելի է կատարել Հայաստանի ազատութեան գործը որ կերեւակայեն թէ առանց նախնական աշխատանքներ կատարելու, առանց նախնական նիւթեր պատրաստելու, մի յեղափոխական ձայն կը հանեն և Հայաստանը կազատուի։

Հայրենիքի ազատութեան համար հրաշքէ աւելի գերազանց միջոցներուն հաւատացող և մտքին մէջ մեծ ըստուերների եռակէն գնացողները ի հարկէ մեր արգահատանք կը չարժեն իրենց պարզմտութեան վրայ. բայց արգահատանքէ աւելի բան մը չգա՛ր մարդ մինչ ազոնց դէմ երբ կը տեսնէ որ մի քանի փորձերէ յետոյ տակաւին կը յամառին հաւատալ իրենց տրուած գերահրաշ յոյսերուն, արհամարհել նախապատրաստական փոք-

թեան մէջ ալ մտցունելու բաներ փոխառած լինին մէկզմէկէ. ուստի այս բառերուն նմանութեան պատճառը աւելի հեռուն պէտք է փնտռել. պէտք է երթալ մինչև անոնց ծագումը գտնել. գործ մը որ լեզուագէտներու կը վերաբերի։ Իսկ ես գտած բառերս հոս կը նշանակեմ ըստ կարգի այբուբենի, միայն կարճառօտ բացատրութիւններ տալով հոն ուր որ պէտք է։

Ահա՛ այն բառերը.

Ակռի, արտասանութիւնը նման ռոմբնական agurida (ակուրիտա) անունին. յունարէնէ առնուած. որ ազմի կը նշանակէ։ Եթէ մեր Ակռի գիւղին աւանդական անունը յիշենք թէ Նոյ ատաղնէն իջնալէն ետքը իր այգին հոն անկե-

րիկ գործերն ու աշխատանքները և այդպես ընտրել արդէն ձեռնարկուած սկզբնական գործերին և իզուր ժամանակ կորսնցնելէ յետոյ ետքէն վերադառնալ նախկին վիճակին։

Անկէ 3 տարի յառաջ մի ազատական հայ թերթ յայտարարելով թէ Անգլիան ազատական կուսակցութեան անդամները՝ որոնք հայ ազգին բարեկամներ են, ընդհուպ իշխանութեան գլուխ պիտի անցնին, կուզէր պայմանի մտնել հայ ազգին հետ «խոստանալով որ 3 տարի չանցած՝ ինքնօրինութեան աչքը կբլայ հայ ազգը»։ Սակայն ճիշդ այն միջոցին որ այդ 3 տարին լրացաւ և Պր. կլատսթոն անգլիական կառավարութեան գլուխն անցած է, ճիշդ այդ միջոցին Հայաստան լրագրի բոլորովին դադարման լուրը միայն կը հասնի մեզ Լոնտոնէն ...։ Իսկ միևնոյն ժամանակ աւելի ցաւալի չէ՞ տեսնել որ այս 3 տարիի մէջ հայ ժողովրդի մէկ մասը մաւուր այնչափ զարգացում և յառաջդիմութիւն ունեցած լինել կերեի որ յիշեալ խոստումներէ աւելի անիրագործելի խոստումներու, անփորձութեան արդիւնք եղող երեւակայական նորանոր ծրագիրներու և ցիեզերական մրուիններու, ինչպէս նաև Հայաստանի մէջ ծագող ընդհանուր ապստամբութեան զրոյցներու, աւելի դիւրութեամբ և պարզմտութեամբ սկսած են հաւատալ և այդ հաւատքով մեծամեծ գործերի ակընկալելով, փոքրիկ գործեր կը համարին նախապատրաստական աշխատանքները, կարհամարհեն զանոնք, կալակցին անոնց ձեռնարկել ուրիշ խօսքով, հայ ժողովրդին մէջ շատ մը անհատներ կան, որ եթէ անտարբեր չըլլային դէպի այս ինչ կամ այն ինչ խնդիրը, շատ գործնական ժարդեր կը դառնային յաջողցունելու համար։

Եւ ի՜նչ. միթէ՞ այս առաջարկը իրագործելու համար մարդը կը պակսի հայ ժողովրդին մէջ։ Սակայն քանի՛ քանի՛ դեղեցիկ ձեռնարկներ կամ առաջարկներ անգործադրելի եղած են, լոկ այսինչի և այնինչի անտարբերութեան պատճառով։

Վեր առնենք մենք մեր միջնկեալ նիւթոյ այն թիւը — երիտասարդ մը ուսանողութեան ընթացքին մէջ մըտնելէն առաջ, (ի հարկէ խօսքս անոնց է որոնք գործարանը բոլորովին ձգել կուզեն) կուզէ իրեն բռնող ձեռք մը ունենալ—։

Ընդարձակ շատ ու շատ խնդիրներ կան որոնք չեն կրնար կատարեալ գործուիլ, առանց ուրիշի մը կամ ուրիշներու ձեռնտուութեան. բայց միևնոյն ատեն՝ ատոնց կատարելագործմանը համար անտարբեր կենալ և ուրիշի ձեռնտուութեան սպասելը կը նշանակէ թէ այդ սպասող անձ, իբրև մարդ, անկախ ապրելու զգացման կամ ձեռնարկի տրամադրութիւնը չունի (և հեռուապէս՝ եթէ այդպիսի անձերի նպատակին ձեռնտու ալ ըլլաս, շատ անգամ կը տուժես)։ Ի՞նչ չահեկանութիւն կունենայ այն խնդիրը որ առանց ջոհողութիւնների կարելի է ձեռք ձգել։ Կենսական հարցերի լուծումը մեծ ջոհողութիւններ կը պահանջէ. հասարակ դասակարդերէ բարձր դասակարգի հասնելու համար, պէտք է ձիգ թափել և հանգիստն ու առօրեայ հաճոյքը ջոհել. գեղեցիկն ու բարձրը ձեռք ձգել փափաքողը պէտք է այդ «իտէալ»ի համար բարոյական նախանձով վառուած լինի։ Եւ այդպիսի մի անձ, վաղ կամ անագան, իր նպատակին կը հասնի երբ նա բարոյական հպարտութեամբ կը նկատէ ինքզինքը իբրև մի մարդ։ — Եւ մենք հայերս ի՜նչքան յառաջդիմած պիտի լինէինք երբ ինքզինքնիս մարդ նկատէինք ու «այսինչի սեղանի փշրանքներէն թող հաւերը ապրին» ըսէինք։

Անանուն, anonim. *յունարէնէ*։—(Այս վերջի երկու բառերը Պօթուշանի ծերունազարդ և Արժ. Տ. Պօղոս քահանան տուաւ ինձ։)

Անպաղար կիր։ *Կողմերուս հայ գաղութները երբ ընտանեաց մէջ հայերէն կը խօսէին, ստէպ կը գործածէին այս խօսքը այնպիսի կանանց նկատմամբ, որոնք տանտիկնուհեան չնորհք չունէին. նոյն տեսակ կանանց Իտմիններն ալ կը սեն* basardinâ (պաշարտինը), *այսինքն՝ աղտոտ, անմաքուր։ Ուրչա՛փ մօտաւորութիւն հայերէնի։ — (Այս բառը Մեծ. Տիար Գր. Մ. Պէյըգլեան տուաւ ինձ։)*

Արգէզ, Arges (արճէշ)։ *Այս անունով Ռումընիոյ մէջ ալ կայ գաւառ, քաղաք, հոյակապ եկեղեցի և գետ։ Տիար Հաշտէտ, երկրիս մեծանուն լեզուագէտ և պատմաբանը. շատ մը փաստերով ցցուց և հաստատեց թէ այս անունը Հայաստանցիները բերին երկրին մէջ։*

Բաբախել, palpitare. *լատ. նմանոտ*

Այս բոլոր խօսքերէն կուզեմ սա եզրակացունել թէ փոխանակ ուրիշի օժանդակութեանը սպասելու, թող մեր երկդիմի և անվստահ երիտասարդութիւնն ինք, հաւատքով և անձնավստահութեամբ, գործի սկսի, գէթ օրինակ առնելովիրենց չուրջ գտնուող հարիւրաւոր օրինակելիներէն։ Դեռ անցեալները լսեցի որ մեր գիւղացի երիտասարդ մը՝ այս երկրի առաջնակարգ համալսարան մը աշակերտելէն յետոյ, գրպանը հազիւ հազ 3 ու կէս տոլար էր մնացեր և թոշակն ալ արձակուրդների միջոցին աշխատելով վճարելու պարտքին ներքև, կորոշէ գէթ իր «հացն ու ջուրը» անկախօրէն հայթայթել. այդ նպատակով դիւրուսանելի և շահաւէտ արհեստի մը աշակերտելով կաշխատի նաև գրպրոցի ժամերէն վերջ։ 8 օր յետոյ՝ իր նոր արհեստին համար կրպակ մը վարձելով ու համալսարանի ուսանողների կոչիկները նորոգելով՝ այնքան անկախ կապրի, որքան նա ժամանակին կապրէր Ուսթըրի գործատուններին միջոցով և թերևս աւելի ազատ այժմ։

Բայց ինչո՞ւ այսքան հեռուն. միթէ՞ նոյն իսկ քո նամակները, սիրելի գիւղացիս, չեն հաստատեր թէ առանց ակնկիռի, ուրիշների սատարութեամբ, սկսած ես և կը շարունակես ու յառաջդիմելդ ալ այնքան հաւատալի է որքան թէ արևն է ազբիւր կեանքի։

Ամերիկա ՅՈՎՀ. ԱԳՐԻՊՊՈՍ

ՆԱՄԱԿ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Պոսթըն, 27 փետր 99

Վերջապէս Պոսթընի հայութիւնն ալ ուզեց պարտազանց չմնալ Զէյթունի հանգանակութեան մասնակցելու մասին։

Ահա այդ առթով հանդէս մը տեղի ունեցաւ Էլիոթ փողոցը, թիւ 45, Քալէտոնեան սրահին մէջ, փետր. 26ի կիրակի իրիկունը։

Ինչպէս կանխաւ ծանուցուած էր, Ս. վարդանանց տօնին առթով այս հանդէս յատկացուած էր ի նպաստ Զէյթունի։ Սրահը լի էր հայերով։ Օրուան պատշաճ ատենախօսութիւնք արտասանուեցան։ Ար֊ժ. Մաշտոց վարդապետ որ պատահաբար ներկայ էր հոն, Զէյթունի վիճակը հակիրճ կերպով ցոյց տուաւ ժողովին, ինչպէս և անոնց օգնելու պէտքը։ Անկէ ետք մէկ երկու ատենախօսութեամբ հանգանակութիւնը բացուեցաւ որով կոկիկ գումար մը դոյացաւ 165 տոլարի մօտ։ Ամէն պատ, 50 տոլարէն մի քիչ աւելի ալ դոյացաւ վիճակահանութենէն որ նոյն հանդէսին մէջ տեղի ունեցաւ։ Ամբողջ գումարը կը հասնի մօտ 220 տոլարի։ Ժողովուրդն իր կարողութեան չափով մասնակցեցաւ. ոմանք իրենց կարողութենէ աւելի. մինակ ձրի թերթի կարգացող ազգասէրներու և ցամաքասոյ անձնուէր յեղափոխականներու ձայնը չէր լսուեր. այսպէս բոլորովին լուռ մնացին ատոնք որովհետև դրամ տալ, քիչ մը զոհողութիւն ընել պէտք էր, չատախօսութեան տեղը չէր։

Հանդէսը իր տեսակի մէջ գրեթէ եղակի էր. բոլոր հանգիսականները գոհ սրտով մեկնեցան։

* * *

Սուլթանի խաչագողներուն համար որոնք սկսած են հայ անունով ներկայանալ և ստակ կորզել, «Տիգրիս» կըսէ թէ ո՞ւր է մեր Առաջնորդ և ի՞նչ կընէ. ինչո՞ւ տեղական թերթերու մէջ չհրատարակեր այդպիսիներու կեղծութիւնը։

«Տիգրիս»ի ցոյց տուած այդ եռանդը գովեստի արժանի էր եթէ անկեղծօրէն ըսած լինէր այդ խօսքերը։ «Տիգրիս» վրդովուած կերևի ոչ թէ անոր համար որ խաչագողները հայ անունով ստակ կը կորզեն Ամերիկացիներէն, այլ Սարաճեան Սրբազանին հարուած տալու համար պատրուակներ փնտռելով կը գրէ այդ տողերը։ «Տիգրիս» ճիշդ այն բանը կընէ ինչ որ երբ մարդ մը աշխատի կապել մէկուն ոտքը և կամ փուչեր ցանել անոր ճամբուն վրայ և անկէ պահանջել որ առանց ցնծալի քալէ։ Այսպէս ալ «Տիգրիս», մէկ կողմէ ամեն տեսակ սուտեր տարածելով չանք չխնայեր բնաւ Սրբազանի ազդեցութիւնը կոտրելու ժողովրդին առջև և միւս կողմէ ալ կը պահանջէ անկէ որ այս ինչ այն ինչ գործերը տեսնէ։ Մենք հարկ չենք համարիր նշանակութիւն տալ «Տիգրիս»ի չարախօսութեանց և գրել ատոնց նկատմամբ, բայց յանուն ճշմարտութեան կուզենք երբեմնակի ցոյց տալ անոր նենգամտութիւնը, գէթ միամիտներն ազատ պահելու համար անոր թակարդն իյնալէ։

ՎԱՂԵՄԻ

ՀՁՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Եւդոկիացի Տիար Պօղոս Խորխոռունի որ կ. պոլիս Պահճէ Գաբուն լրագրավաճառութեամբ և չրավաճառութեամբ կը զբաղէր իր խանութի մէջ և իր այդ դիրքով վաղուց ի վեր ծանօթութիւն և յարաբերութիւն ունեցած էր գրեթէ ամեն հայ գրագէտներու և ազգային գործերով զբաղողներու հետ, մեռեր է անցած ամիս և թաղուեր է Շիշլիի գերեզմանատունը։

(Շարունակելի)

Եալ Լ. Սրմագաշեան

ԳԻԻՂԱՑԻԻՍ ՀԵՏ

(Շար. 63րդ բուհն եւ վերջ)

Այսպիսի ժարմին մը գոյացունելը դժուար չէ հայ ժողովրդին մէջ եթէ պաշտօնին յարմար անձը յառաջ գայ։ Հայ ժողովուրդը խոստմնալից ժողովուրդ մ'է. միայն թէ «հունձքը առատ է բայց մշակները սակաւ». կամ

լով անունը Ակոռի դրաւ, այն ատեն հաւանականաբար կրնանք ըսել թէ ռոմընական ակուրիտան մօտաւորութիւն ունի Ակոռիին։

Ամար, amar, *լատիներէնէ առնուած. արտասանութիւնը նման հայերէնի. միայն թէ ռոմըներէնի մէջ յեղի կը նշանակէ։*

Ամորձատ, amortit (*ամորձիթ*). *Քըմբրութիւն կը նշանակէ։ Եթէ ի նկատի առնունք թէ ամորձատութիւնն ալ տեսակ մը քմբրութիւն է ծննդական անդամոց, այն ատեն արտասանութեան հետ միանգամայն նշանակութիւնն ալ կը մօտենայ։*

Այեր, aer. *յունարէնէ առնուած. Նոյն նշանակութիւն և արտասանութիւն։*

Այլ, alt (*ալթ*). *Մօտաւոր արտասանութիւն և նոյն նշանակութիւն։*

Այլուր, aiurea (*աիւրեա*). Գաղ. ailleurs. *Մօտաւոր արտասանութիւն և նոյն նշանակութիւն։*

Թիւն հայերէնի։

Բլակինդ, plâcinta (*բլըչինթա*). *Խոտերէնէ առնուած։*

Դու, tu (*դու*). *Նոյնն ըստ հայերէնի։*

Դրժել, dârjire *կամ* îndârjire (*ըրժիրէ, ընըրժիրէ*). *Նոյն արտասանութիւն. բայց ռոմըներէնի մէջ խոժոռեալ դիմադրութիւն կը նշանակէ։*

Զրկեալ, zârghit (*զըրկիթ*). *Նոյն արտասանութիւն. բայց ռոմըներէնի մէջ խելքէ զրկուած, խելագար կը նշանակէ։*

Է, e. *բայ էական. Նոյնն ըստ հայերէնի։*

Թաւալել, târâlire (*թըվալիրէ*). *Նոյնն ըստ հայերէնի։*

Թմբիր, târnpit (*թըմբիթ*). *Նոյնն ըստ հայերէնի։*

Թուփ, tufâ (*թուֆը*). *Լատ. Նոյնն ըստ հայերէնի։*

կառք, car. *Լատ. Նոյնն ըստ հայերէնի։*

(Շարունակելի)

Ա.յս ազգասէր Հայը իր փոքրիկ խանութի մէջ աշխատելով չահած և խնայողութեամբ աւելցուցած բոլոր դրամը կտակով թողուցեր է Ս.Փրկչի Ազգ. Հիւանդանոցին։ Որքա՜ն Հայ հարուստներ կան որոնք պէտք ունին խոնարհելու սուձի Պօղոս աղային առջև և անկէ օրինակ առնելու։

— Օրթաքէօյի գերեզմանատան խնդիրը մը նորէն ծագած է Կ. պոլսի մէջ։ Պալատականները կուզեն գրաւել Հայերի այդ սեփականութիւնն. բայց ինչպէս Խրիմեան և Զեհնափետեան պատրիարքների օրով յարուցուած Բերայի և Պեշիքթաշի գերեզմանատուններուն խնդիրները վերջացած են, հաւանօրէն այս ալ այնպէս կը վերջանայ։ Մեր եկեղեցական ատեանները հասկցած, գերեզմանատունները յանձնել պալատականներին որ մեռելները տակնուվրայ դարձունեն իրենց հաճոյքի համեմատ չէնքեր կառուցանելու համար, մի այնպիսի արգիլուած գործողութիւն է որ գայթակղութիւն կը պատճառէ և կը վիրաւորէ խղճահար ժողովրդի դիւրազգածութիւնը։ Ուստի կրօնական ժողովը որոշեր է դիմել Էմինեան Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին և այս խնդիրը իր բոլոր հանգամանքներովը տեղեկացունելով անոր վճռի ենթարկել։

— Տիար Ըարութիւն Մերեճկուլի ծանօթ փաստաբանը որ իր վարած ազգային այլևայլ պաշտօններով ալ ծանօթ անձնաւորութիւն մ'է, մարտ 10ին (Ն.Տ.) սրտի կաթուածէ մեռեր է 65 տարեկան հասակին մէջ։ Մարմինը զմռսեր են իր եղբօր գալուն սպասելով որ Ժընեվ կը գտնուի այժմ։ Այդ պատճառով որոշուեր է որ յուղարկաւորութեան հանդէսը կատարուի մարտ 19ի կիրակի օր։

— Հայ հռովմէականների պատրիարքարանը հերքմնագիր մը ղրկած է Կ. պոլսի ազգային թերթերին որով կը յայտարարէ թէ Վանի մէջ հռովմէականութիւն ընդունած Հայերին իրենց մայրենի եկեղեցիի գիրկը վերադարձած լինելու լուրը սխալ է։

Տեսնենք թէ այս հերքմնագրի դէմ ի՛նչ հերքում պիտի տրուի պաշտօնապէս։

Վեհ. Հայրապետը 15,000 րուբլի ղրկեր է Վանի և Մուշի սովատանջներին բաշխուելու համար։

Թիւրք կառավարութիւնը 3,000 օսմ.ոսկի (69,000 ֆր.) նպաստ ղրկեր է Վանի սովատանջներուն համար և Երկրագործական Դրամատան ալ հրամայեր է 160,000 ղրուշի փոխատուութիւն ընել հողագործներուն, դիւրացուցիչ պայմաններով։

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը մի իրատէ հանած է որով կիմացունէ թէ Լահէյ գումարուելիք ղէնըննկեցութեան համաժողովին ինք ալ կը մասնակցի ինչ ինչ վերապահութիւններով։

— Կ. պոլսի յունական դեսպանը մարտ 17ին մի զեկուցագիր ղրկեց մեծ պետութիւնների Կ. պոլսի դեսպաններուն, իրենց տեղեկացունելու համար թէ հելլէն կառավարութեան հրահանգին համեմատ Բ. Դրան մի բաղաքագիր տուած է պատերազմէն ի վեր հելլենահպատակներին նկատմամբ եղած վարմունքին դէմ և կը խնդրէ տերութիւնների միջամտութիւնը, հիւպատոսական դաշնագրի կնքուիլը փութացունելու համար։

— Ալմանիա վիլհելմ կայսրին սուլթան Համիտի նուիրած արագաձիգ թնդանօթը Կ. պոլիս հասեր է մարտ 18ին։ Անոր վերաբերեալ կը տարբերը 20 անտուկի մէջ ամփոփուած են և հետը մէկտեղ յատուկ պատուիրակ մը, կայսրի թիկնապահներէն Հէնձ գնդապետը ղրկուած է, այդ նուէրը սուլթանին տալու համար։

— Կայսրներն այս միջոցին անասուններ իրար նուէր ղրկելու եղեր են։ Ալմանիայի վիլհելմ կայսրը 6 ընտիր ձի և 6 ալ ընտիր ցեղէ շուն ղրկեր է սուլթան Համիտին։ Սուլթան Համիտ ալ 14 այծ կը ղրկէ Աւստրիայի Ֆրանց Ցոզէֆ կայսրին։

— Մի ժամանակէ ի վեր քարիւղի և նաւթի առատ աղբիւրները երևցած լինելով արշիպելագոսի և Հայաստանի ու կարինի նահանգներին մէջ, եւրոպացի դրամատէրներ զանազան չահագործելու արտօնութիւն ստանալու համար առաջարկներ ներկայացուցեր են Բ. Դրան։

— Կ. պոլսէն կը հեռագրեն մարտ 19ին թէ Զմիւռնիայէն եկած լուրերուն նայելով, կրէտացի գաղթականներն օգուտ քաղելով նահանգապետի բացակայութենէն որ պտոյտի ելած էր, ծանր անկարգութիւններ գործած են. բազմաթիւ քրիստոնեաներ, առանց աղգային խտրութեան, այդ խռովութիւնների զոհ գնացեր են։

— Կ.պոլսէն կը հեռագրեն մարտ 20ին. «Զմիւռնիայէն եկած լուրերը կը հաստատեն թէ 6,000 մահմետականներ կրէտացի գաղթականներ որոնք ապրելու ամեն միջոցներէ զուրկ կը գտնուին, երէկ կողոպտեցին ծոյներէ և թիւրքերէ թաղերը։ Մի կուբ ե. ղաւ։ Մանրամասնութիւնները կը պակսին. բայց կը հաւաստեն թէ շատեր սպաննուած կամ վիրաւորուած են։»

— Սուլթանը մի իրատէ հանեց որով վերջնականապէս Անատոլուի երկաթուղիի ընկերութեան կը շնորհէ մթերանոցներ ունենալու արտօնութիւնը Հայոց փաշալի մէջ, չնայելով որ Ֆրանսական կառավարութիւնը շատ հակառակած էր ատոր։ Քարափների Ֆրանսական ընկերութեան փոխարինութիւն մը չէ եղած դեռ ատոր համար, թէև սուլթանը բացարձակ խոստումներ տուած էր Ֆրանսական դեսպանին։

ՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՖԻՆԼԱՆԴԱՑԻՆԵՐԸ

Բէթէրսպուրկէն կը հաղորդեն թէ 400 Ֆինլանդացիներ անցած հինգշաբթի օր (մարտ 16) Բէթէրսպուրկ եկած էին և կուզէին մի խնդրագիր տալ Ցարին։ Իրենց խմբոյ տրուեցաւ որ պէտք է անմիջապէս վերադառնան իրենց երկիր. ապա թէ ոչ տեղական իշխանութեան հրամանով բռնի պիտի վերադարձուին։ (Ֆինլանդական խընդրի մասին տեսնել Գրմեհիայի 59րդ թիւը։)

ՋԷՆԸՆԿԵՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Փարիզի «Սոլէյլ» լրագրին հաղորդած են Հռոմէն հետեւեալը.

«Լուր եղած էր թէ իտալական կառավարութիւնը ղէնըննկեցութեան համաժողովին համար որ պիտի գումարուի Լահէյի մէջ, իրեն ներկայացուցիչ նշանակեր է Տ. Վիսքոնթի Վէնոսթան։ Այդ լուր ճիշդ չէ. իտալական կառավարութիւնը յատկապէս ցոյց տալու համար թէ ինք չատ մեծ նշանակութիւն չտար այդ համաժողովի, Լահէյի իր դեսպանը պատուիրակ նշանակելով պիտի բաւականանայ։ Հրաւիրագիրները դեռ ղրկուած չլինելով, յայտնի չէ դեռ թէ ի՛նչ կերպով լուծած է հոլանտական կառավարութիւնը պապին այս համաժողովի մասնակցելու խնդիրը։»

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Մանիլայէն կիմացունեն որ մարտ 14ի երեկոյին Բասիկի քով կռիւ մը եղած է Ամերիկացի հուիթըն զօրավարի զօրքերուն և 3000ի չափ փիլիպեան ապստամբներուն միջև։ Հուիթըր զօրավարը չարաչար յաղթած է փիլիպեաններուն որոնց մեծ կորուստ պատճառած և 400ը գերի բռնած է։ Զօրավար Հուիթըր գրաւած է Բասիկ և Բաթէրոս քաղաքները։ Ամերիկացիները չատ քիչ կորուստ ունեցած են։

— Պատերազմէն վերադարձած սպանիացի զօրքերը վալանսի, Թարրակոնի և ուրիշ նահանգային գլխաւոր քաղաքներուն մէջ ցոյցեր ըրին, իրենց թոշակների անվճար մնացած մասը պահանջելով։ Մատրիտի տեղական իշխանութիւնները յաջողեցան տեղի չտալ այդպիսի ցոյցերի։

— Սպիտակ նեղոսէն գահիրէ ղրկուած վերջին լուրերը կիմացունեն որ Թալիֆաի զօրքերէն չատերն սկսեր են դասալիք փախչիլ։

— Ալեքսանդրիայէն կը հաղորդեն թէ Ազոլքերի երկաթուղիին վրայ մարտ 15ի կէս գիշերին ժամանակ ընդհարում մը պատահած է։ Շատ անձեր վիրաւորուեր են որոնց մէջ է և կառավարիչը։

— Սպանիական կառավարութիւնը 30 միլիոնի փոխառութիւն մ'ըրաւ Ուրքիժօ դրամատունէն, Քուպային վերադարձած զօրքերի անվճար ճամբացած թոշակները վճարելու համար։

— Գահիրէէն «Մօրնինկ Լիտըր»ի տրուած մի հեռագիր կըսէ թէ Սուտանի մէջ գտնուող զօրքերի հարիւրին 20ը յոգնութենէ և տաքէ մեռեր են անցած չաբաթ։ Զօրքերի առողջական վիճակը լաւ չէ. այնպէս որ հիմակու հիմա ոեչ արշաւանք յետաձգել հարկ պիտի լինի։

— Մարոքի կառավարութիւնը 200,000 ֆրանգ տուաւ ալմանական մի վաճառատան, հրացան գնելու համար։

— Բէթէրսպուրկի գինուորական դատարանին առջև մի մեծ և յուզիչ գատ կը տեսնուի այժմ։ Հօսւայկի և կօրօտչէվցով զօրավարներն ինչպէս նաև 3 գնդապետներ ու իրենց 9 մեղսակիցներ ամբաստանուած են թէկեղծիքներ, վաչխառութիւններ, կաշառակերութիւններ և խարդախութիւններ կը գործադրեն եղեր։ Բազմաթիւ անձեր զոհ գնացած են այդ պատերի գործած ոճիրներուն, այնպէս որ երկար պիտի տեւէ դատավարութիւնը. 100էն աւելի վկաներ կանչուած են դատարանին առջև։

— Սպանիայի խնամակալ թագուհին մարտ 17ին ստորագրեց խաղաղութեան դաշնագիրը։ Դաշնագրի այդ վաւերացուած օրինակը կը ղրկուի Վաշինկթընի Ֆրանսական դեսպան Տ. Ժիւլ Քամպոնին որ փոխանակուի նախագահ Մաք Քինլիի ստորագրածին հետ։

— Սպանիական կառավարութիւնը Տ. Ժիւլ Քամպոնի միջոցով ամերիկեան կառավարութեան տեղեկացուց Ակուինալտոյի ձեռքը գտնուող սպանիացի գերիներուն կացութիւնը, յայտնելով միանգամայն թէ Օթիս զօրավարն այդ գերիներուն արձակման համար ապստամբներուն հետ բանակցութիւնները չարունակէն արգիլած լինելով, խնդրին վիճակը ծանրացած է այսպէս։

— Նիւ-Եորքի ամենաչքեղ օթեանները մին, Ուինտսօր օթեանը, մարտ 17ին կէսօրէն յետոյ ժամ 3ի առեն սկսաւ յանկարծ բռնկելով բոլորովին այրուեցաւ լմնցաւ։ Օթեանը 500 սենեակ ունէր և շատ ճանբորդներ կային մէջը։ Կրակը 2րդ յարկէն ըսկսած և անմիջապէս բոցերը տարածուած լինելով, վրայի յարկերուն մէջ գտնուող ճանբորդները չփոթած և ի՛նչպէս փախչելնին չեն գիտցած։ Ցետոյ է որ շատեր պատուհաններէն վար նետեր են զիրենք բոցերի մէջէն։ Բոցերէն ազատուած վիրաւորները մօտակայ տուները տարեր են դարմանելու համար, բայց քանիներ նոյն իսկ այնտեղ աւանդեր են իրենց վերջին շունչ։ Մեռածներուն առաջ ժամով թիւն է 12 կին և 2 մարդ. վիրաւորուած 33 կին և 17 մարդ։ Շատեր ալ անհետացած

են և դեռ յայտնի չէ թէ ո՞ւր մնացած, ինչ եղած են։

Մեռածներին մէջ է նախագահ Տ. Մաքֆինլիի քենին որ իր էրկան ու աղջիկին հետ մէկտեղ նոյն օթեւանը կը բնակէր։

«Հէրալտ» կըսէ թէ այս աղէտի վրայ օթեւանին տէրը խենթեցեր է։ Եղած նիւթական ջնասը մէկ միլիոն տոլարի կը հասնի։

Ձանապարհորդների արձանագրութեան տետրակը որ յետոյ գտնըւեցաւ, ցոյց կուտայ թէ հրդեհի միջոցին 212 ճանապրդ կը բնակէր օթեւանը։ Ամէն գաո, օթեւանին մէջ ծառայողների թիւը 350ի կը հասնի որոնցմէ շատերը կը վախցուի թէ մեռած լինին։ Կորսուած գոհարեղէններն ու թանկագին իրերը մէկ միլիոն տոլարի կը գնահատուին։ Հրդեհի չափազանցութեան մէջ ոգին դողեր մտեր են շատ մը սենեակներ և կողպտեր են։ Մի քանի ձերբակալութիւններ եղած են։

— Պուլկարիան Ֆէրտինանտ իշխանը մարտ 17ին մի հրամանագիր հանեց որով կը լուծէ այժմեան Ժողբանիէն։ Նոր ներսփոխանների ընտրութիւնները պիտի կատարուին մայիս 7ին (Ն. Տ.)։

ԲԱԶՄԱՎԷՊ ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԶՄԱՎԷՊ կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբն։ Կը պարունակէ Հայ մատենագրական, ստուգաբանական, պատմական, քերականական, աշխարհագրական, հնախօսական յօդուածները և Հանդէս հանդիսից տիտղոսով հետաքրքրական տեղեկութիւնք նոր տեղեկութիւնք ԲԱԶՄԱՎԷՊԻ նորատիպ յատեանները վրայ զրոյց իրրև նուէր կընդունի, հակիրճ քննադատականով մը զանոնք կը հրապարակէ։ Բաց ասոր կը հրատարակէ Եւրոպական դասական ոտանաւորներու աշխարհաբար թարգմանութիւնք. Գաղտքական տեսութիւնք և ազգային բերքերու քաղուածոյ ցանկն։ — Տարեկան գինն է ԿԱՆԽԻԿ 10ֆր. լպ.4. տոլ. 2։

Հասցէ՝
Rédaction de la Revue «Pazmaveb»
St. Lazare
(Italie) VENISE

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՓԻՆԵԱՆ 14ՐԴ ՇՐՋԱՆԻՆ

Ա յսուհետև Արմենիայի 14րդ չրջանի սկզբէն (1898 օգոստոս) բաժնորդագրութիւն չենք կրնար ընդունիլ։

Ինչպէս ծանուցուած է Թերթին ճակատը դրուած «Բաժնորդագրութիւն» բաժնին մէջ, ամսական բաժնորդ կարելի է գրուիլ այսուհետև Արմենիային, 1899 յունուար ամսէն և կամ սեպ ամսի սկզբէն, ամիսը 2½ ֆրանգ հաշուելու և 1899 մայիս ամսէն անդին չանգնելու պայմանով։

«Արմենիայի Ժամադակ» եղողներին, վերադրեալ պայմանի համեմատ իրենց համար ստացած Թերթէն զատ, իրենց հասցէով ուրիշի համար քանի Թերթ որ ուզեն, կը զրկուի ամսական մէկ ֆրանգ մեայն բաժնորդագին վճարուելով։ («Արմենիայի Ժամադակ»ուԹեան կանոնագիրը ձրիապէս կը զրկուի ցանկացողներին։)

Արմենիայի առաջիկայ 15րդ չրջանին համար բաժնորդագրութիւն այժմէն չընդունուիր. այլ ինչպէս մեր սովորութիւն է, այնատեն միայն բաժնորդագրութիւն կընդունուի յաջորդ չրջանի համար, երբ Արմենիայի մէջ կը հրատարակուի թէ այդ նոր չրջանի բաժնորդագրութիւնը բացուած է։

Ոևէ չրջանի մէջ եղած բաժնորդագրութեան հաշիւը իրեն յաջորդ չրջանի հաշուին հետ չխառնուիր։

Լոյս տեսաւ
ՐԱՖՖԻ
ՍԱՄՈՒԷԼ
պատմական վէպը
Ա. Բ. Գ. Գիրք
Հեղինակի վերջին պատկերով
Գինն է 7 չիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա, Բ և Գ վերջաբանով և «կայծեր» հատոր Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուայ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնը շարունակւում է. երկու դրքի միասին բաժանորդագինն է՝ 10 չիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ կարժենան 14 չիլինգ։

Ցանկացողները թէ՛ Սասունցի և թէ՛ Րաֆֆիի միւս երկերի համար, կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi
270, Uxbridge Road
Shepherd's Bush,
London W.

ՕՐԱՑՈՑ 1899 ԹՈՒԱԿԱՆԻ

Կալացի Տ. Ղևոնդ քահանայ փափաքանի հրատարակած 1899 թուականի հայերէն և ռուսաներէն պատկերազարդ տարեցոյցը որ կարևոր դիտելիքներով ալ ճոխացած է, ծախու հանուած է արդէն։

Գինն է թղթակազմին 1 ֆրանգ (20 սէնթ)։ Դիմել կալաց, Ա.րժ. հրատարակչի հասցէին։ կարելի է ըստանալ նաև Արմենիայի խմբագրատունէն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած դիներին մէջ հաշուուած է նաև զրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամէն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլո) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

ԻՆՔՆՈՒՍՈՒՅՑ ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
Քօրիևից
ՊԵՏՐՈՍ Ռ. ՔՈՐՈՍԵԱՆ
Այս դիրքը պատրաստուած է յատկապէս Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ դանուող Հայերուն Ամերիկեան Անգլիերէն լեզուն աւելի ադուրիւրի ոճով սովրեցնելու համար։ Ինքնուսուցիչը յօրինուած է գերմանական և ամերիկեան մանկավարժական սկզբունքներուն վրայ հիմնուելով, և յարմարցուած է մարդակազմութեան ու իմացական փիլիսոփայութեան նորագոյն պահանջքներուն և Ամերիկայի Հայոց իմացական կարողութիւններուն ու տեղական պահանջներուն։ Առաջինն է իր տեսակին մէջ։

Կը բաղկանայ աւելի քան 350 երեսներէ և կը պարունակէ աւելի քան 3,000 ամենէն շատ գործածուած բառեր։ Ամեն բառի առջև դրուած է նոյն բառի ամերիկեան մաքուր անգլիերէն հնչումը և ամերիկեան նշանակութիւնը։ Գիտական բառերու առջև աւելցուած են քերականական, պատմական, աշխարհագրական, աստղաբաշխական, չափաբերական և ընկերաբանական զանազան ծանօթութիւնները։ Գինն է 10 ֆրանգ (2 տոլար) Մարսէյլի մէջ։ Մարսէյլէն դուրս ղրկուելու համար 10 ֆր. և 80 սնթմ.։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրև նմոյշներ զանազան քաղաքներէ մէջ և զանազան տպատարութիւններէ տակաւին երբեմն գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրեն նուիրուած են այս տետրակի մէջ, ինչ և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարանների մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն ցարդուց արդէն արդելուած է, և Ամերիկա լրագիրներուն մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպատարութիւնների տակ ներքին չուելով գրուած են։ Գին (10 սանթիմ 15 սանթիմ։

— HISTORY of the ARMENIANS IN INDIA. From the earliest times to the present day. By MESROVB J. SETH Armenian examiner to the University of Calcutta and Member of the Asiatic Society of Bengal. Calcutta. 1895.

(Price: 5 francs at Marseilles or 5 fr & 50 centimes post free.)

(Մարսէյլի մէջ 5 ֆրանգ է. Մարսէյլէն դուրս ղրկուելու համար 5 ֆրանգ և 50 սանթիմ։)

Արտօսր Հայաստանի կամ Տեղեգիր Բալուայ, Քարբերդու, Զարտանճատի, Ճապաղչուրի և Երզնկայու։ Ծաւելուած ըստ խնդրանաց ազգասիրաց «Յիսուն դաւառ»։ Աշխատասիրեաց Գեորգ Ծ. վ. Նազարեան։ 2 ֆրանգ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ ժամանակը շեղ կը լինի Զարկաստանի Հայերին ջամբ որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիները։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԳՈՒՂՂԱՐԻՈՑ ևՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԳՈՒՂՂԱՐ ԱԳՏԱՐԱՐՈՑ (Սպառած)
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներէ պանդխտութեան տխուր հետեւանքներէ սեղմ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ԲԱՆԻԿԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ լետ այբուբենաց առաջարեալ (Սպառած)
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՑԱՀԿԱՀԱՑԱՄՏԱՆՈՒՄ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ քրնակող այլ և այլ ազգերէ քանակիչներ թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուղարարի մէջ որ ուրիշ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներ գործած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՇՈՒՐԻՈ (Ցունաստանի մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներ գործած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) 20 սանթիմ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԸՐԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբրազանի պատկերը ընտիր Թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Ա. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷՅԼ
Հայկեան տպարան Ա. Փորթուգալեանի
Le Gérant: François CARRIERE
Imp. M. Schickler, 9, Quai du Canal. Marseille.